- ✓ Մանկական ճվիկ

Ծիլ, ծիլ, ծիլծիլա,
Ելեք, տեսեք՝ ո՞վ կուգա,
Պստի պապը տուն կուգա,
Չամիչ ուտելեն կուգա,
Ճանճը տզզալեն կուգա,
Ճնճուղը թը՛ռնելեն կուգա:

- ✓ Մամի, մամի

Երեխաները բռնում են միմյանց ձեռքից և ուղիղ գծով կանգնում: Շարքի վերջում կանգնածներից մեկը մյուսին հարցնում է.

- Մամի, մամի, խաղողը հասե՞լ է:

Մյուսը պատասխանում է.

- Հասել է, հասմըսել է,

Շանը կտամ, գելին կտամ,
Քեզ մի ճութ չեմ տա:

- Ինչո՞վ գամ՝ որ տաս:
- Դհոլ - զուռնով:

Հարցնողն իր խմբով, դհոլի և զուռնայի ձայներին նմանեցնելով, որևէ երաժշտություն «նվագելով», շարքի առջևից գալիս և անցնում է պատասխանողի և նրա կողքին կանգնածի թևերի տակով: Երբ շարքը նորից շարվում է իր նախկին դիրքով, պատասխանողի կողքին կանգնածի դիրքը փոխվում է: Նրա ձեռքերը խաչված են, իսկ ինքը՝ շրջված հակառակ կողմ: Երկխոսությունը կրկնվում է մի քանի անգամ: Յուրաքանչյուր երկխոսության վերջում հանձնարարությունը տարբեր է լինում՝

ձիով, մեքենայով, թռչկոտելով, մի ոտքով թռնելով, ավանակով, հաց ուտելով (հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,) երգելով, գնացքով, զմփիկով, նապաստակի նման ցատկելով և այլն: Ամեն անգամ անցնում են արդեն շրջվածի և կողքին կանգնածի բռնած ձեռքերի տակով: Երբ անցնում են վերջին զույգի թևերի տակով, պատասխանողն ասում է.

- Մամին կասի՝ սխտոր ծեծեք:

Շարքը, բաց չթողնելով ձեռքերը, ռիթմիկ թռիչքներ է կատարում՝ բացականչելով.

- Չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ, չը՛խկ:
- Մամին կասի՝ լվացք ենք արել, պարանը կարճ է:
- Քաշենք՝ երկարի:

Երկու կողմից խաղավարները, որոնց կողմից է շարքի կեսը, նրանց հետ քաշում են այնքան, մինչև մեջտեղի կամ որևէ զույգի ձեռքեր իրարից բաժանվեն: